# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 27

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

***Ք. Երևան***

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. հունիսի 6-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

| | |
|---|---|
| Կարեն Հովհաննիսյան | Կոմիտեի նախագահ |
| Բաբկեն Ղալոյան | Կոմիտեի անդամ |
| Տիգրան Իսրաելյան | Կոմիտեի անդամ |
| Արման Ալաբերքյան | Կոմիտեի անդամ |
| Հայկուհի Ռշտունի | Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար |

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **22.05.2022թ. «Լ. Արցախ-06»-«Էրեբունի-05» (17A-081) խաղը տեղի չունեցավ «Էրեբունի-05» թիմի ոչ լիարժեք կազմի պատճառով:**

---

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Էրեբունի-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5րդ կետը՝ «Էրեբունի-05» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Համայակ Խաչատրյանի անվ. մանկապատանեկան համալիր մարզադպրոց. h11 հիմնարկ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

2. **14.05.2022թ. «Բերդավան-04»-«Նոա-1-04» (18B-062) խաղը սկսվել էր 20 րոպե ուշացումով՝ երկու կողմի տուգանային հրապարակի մեջ մեծ քարեր լինելու պատճառով:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Բերդավան-04» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ Բերդավանի «Գեղագիտական կենտրոն» ՀՈԱԿ ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի երկուսապատիկի՝ 2.000 ՀՀ դրամի չափով:

3. **05.04.2022թ. «Անդրանիկ ՖԱ-05»-«Ակադեմիա-06» (17A-056) խաղը սկսվել էր 15 րոպե ուշացումով՝ Ակադեմիա-06 թիմի ուշանալու պատճառով:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Ակադեմիա-06» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ «ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիա» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»

4. **15.05.2022թ. «Փյունիկ»-«ՈՒրարտու» (ՊԼ-163) հանդիպման ժամանակ, Փյունիկ թիմի երկրպագուների կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու և երկրպագուների կողմից ճայթրուկներ պայթեցնելու վերաբերյալ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

1) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250.000 ՀՀ դրամի չափով:

2) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

5. **18.05.2022թ. «Լ.Արցախ-06»-«Ակադեմիա-06» (17A-067) խաղը սկսվել էր 15 րոպե ուշացումով՝ Ակադեմիա-06 թիմի ուշանալու պատճառով:**

---

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց*** ՝

Հաստատված համարել «Ակադեմիա-06» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ «ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիա» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»:

6. **21.05.2022թ. «Ալաշկերտ-05»-«Վաչիկ-05» (17C1-011) հանդիպման ժամանակ, նախախաղային խորհրդակցությունը սկսվել է նախատեսված 13:30-ի փոխարեն 14:00-ին, Վաչիկ-05 թիմի ուշանալու պատճառով և նույն պատճառով խաղը սկսվել է 10 րոպե ուշացումով: Խորհրդակցության ընթացքում պարզվել է, որ երկու թիմերն էլ ունեն միայն սպիտակ համազգեստ, ուստի որոշել ենք, որ հյուրերը խաղան կարմիր ժիլետներով: Հանդիպմանը և նախախաղային խորհրդակցությանը ներկա չեն եղել նաև ոստիկանները: Անվտանգության հարցերի պատասխանատվությունը իր վրա է վերցրել Ալաշկերտ 05 թիմի մարզիչ Մուշեղ Խաչատրյանը, որից հետո որոշել ենք անցկացնել խաղը**:

---

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց*** ՝

1) Հաստատված համարել «Վաչիկ-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ «Վաղարշակ /Վաչիկ/ Տիգրանի Ղալթախչյան Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն»:
2) Հիմք ընդունելով (2021-2022 մրցաշրջանի) ՀՖՖ մանկապատանեկան ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 27-րդ հոդվածի 04-րդ կետը՝ հաստատված համարել «Վաչիկ-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը, Կարգապահական և էտիկայի Կանոնակարգի 44-րդ հոդվածի 45-րդ կետով՝ «Վաղարշակ /Վաչիկ/ Տիգրանի Ղալթախչյան Ֆուտբոլային Ակումբ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց հայտարարել «Նկատողություն» և տուգանել նվազագույն աշխատավարձի երկուսապատիկի՝ 2.000 ՀՀ դրամի չափով:

3) Հաստատված համարել «Ալաշկերտ ՖԱ» ակումբի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կերտը՝ «Ալաշկերտ ՖԱ» ակումբին հայտարարել «Նկատողություն»։

7. **22.05.2022թ. «ՎՖԴ-08»-«ԱՖԴ-08» (14C1-013) խաղը չի կայացել ԱՖԴ-08 թիմի խաղին չներկայանալու պատճառով։**

---

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «ԱՖԴ-08» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «ԱՖԴ-08» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Արթիկի ֆուտբոլի մարզադպրոց»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով։

8. **20.05.2022թ. «ՎՖԴ-07»-«ՈՒրարտու-2-07» (15B-068) խաղը չի կայացել խաղադաշտում առկա ջրակույտերի և ցեխի պատճառով։**

---

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «ՎՖԴ-07» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 21-րդ կետը՝ «ՎՖԴ-07» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Վանաձորի ֆուտ/դպ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30.000 ՀՀ դրամի չափով։

9. **22.05.2022թ. «Նորք-07»-«Ալաշկերտ-2-07» (15C3-036) խաղը չի կայացել Ալաշկերտ-2-07 թիմի խաղին չներկայանալու պատճառով։**

---

***Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝***

Հաստատված համարել «Ալաշկերտ-2-07» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ըմնդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Ալաշկերտ-2-07» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Ալաշկերտ ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի 10.000 ՀՀ դրամի չափով։

10. **12.05.2022թ. «ՈՒրարտու-2-09»-«Բենտոնիտ-1-09» (13Մ1-056) հանդիպման ժամանակ, ՈՒրարտու-2-09 թիմի ֆուտբոլիստուհի Արփիար Զոհրաբի Մենեդյանի (34910) կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ (բռնարարք):**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «ՈՒրարտու-2-09» թիմի ֆուտբոլիստուհի Արփիար Զոհրաբի Մենեդյանի (34910) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «ՈՒրարտու-2-09» թիմի ֆուտբոլիստուհի Արփիար Զոհրաբի Մենեդյանին (34910) որակազրկել 3 խաղով և «ՖԱ Ուրարտու ՄՀԿ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

11. **22.05.2022թ. «ՈՒրարտու»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-169) խաղի 13-րդ և 16-րդ րոպեներին՝ Արարատ-Արմենիա ՖԱ-ի յուրաքանչյուր գոլից անմիջապես հետո, ֆան ակումբի ներկայացուցիչները 3-ական լուսարձակող ճայթրուկ վառեցին:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

12. **24.05.2022թ. «Փյունիկ»-«Արարատ» (ՊԼ-174) խաղի սկզբից անմիջապես առաջ դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից օգտագործվել են 6 ֆայեռներ:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150.000 ՀՀ դրամի չափով:

13. **26.05.2022թ. «Լոռի ՖԱ-08»-«Օնոր Ակադեմիա-08» (14Բ-057) Խաղը չի կայացել, «Օնոր Ակադեմիա-08» թիմը չէր լրացրել արձանագրության իր մասը FMS ծրագրում: Իսկ խաղադաշտ դուրս գալու ժամանակ մարզիչ Նորայր Գաբրիելյանը հայտնեց ինձ, որ չի ցանկանում մասնակցել խաղին, և չցանկացավ տալ բացատրություն:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Օնոր Ակադեմիա-08» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 11-րդ կետը՝ «Օնոր Ակադեմիա-08» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Օնոր» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30 000 ՀՀ դրամի չափով:

14. **16.04.2022թ. «Նորավանք-05»-«Չարենցավան-05» (17B-039) հանդիպման ժամանակ, «Նորավանք-05» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Գառնիկի Մովսիսյանի (30057) կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ (կանոնների կոպիտ խախտում):**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Նորավանք-05» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Գառնիկի Մովսիսյանի (30057) կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 14-րդ կետը՝ «Նորավանք-05» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Գառնիկի Մովսիսյանին (30057) որակազրկել 2 խաղով և «Նորավանք սպորտային ակումբ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

15. **26.05.2022թ. «Ակադեմիա-3-09»-«Դիադին-09» (13Մ4-043) խաղը տեղի չի ունեցել «Դիադին-09» թիմի խաղին չներկայանալու պատճառով:**

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

Հաստատված համարել «Դիադին-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Դիադին-09» թիմին գրանցել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով և «Վարդենիսի թ. 1 մարզադպրոց»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

16. **01.06.2022թ. «Միկա-06»-«Արարատ-Արմենիա-06» (16A-072) հանդիպման ժամանակ, «Միկա-06» թիմի ֆուտբոլիստ N6-ի և «Արարատ-Արմենիա-06» թիմի N10 ֆուտբոլիստի կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ (բռնարարք): Խաղի 47-րդ րոպեին Միկա-06 թիմի խաղացող N10-ը կոպիտ խաղաց Արարատ-Արմենիա-06 թիմի խաղացող N6-ի նկատմամբ: Վերջինս հարձակվեց և սկսեց հարվածել Միկա-06 թիմի խաղացող N10-ին, որից հետո սկսվեց ծեծկռտուք երկու թիմերի մասնակցությամբ, որին միջամտեցին խաղացողների ծնողները, որոնք գտնվում էին տրիբունայում: Թիմերի մարզիչների ջանքերով ծեծկռտուքը դադարեց իսկ խաղը վերսկսվեց այն դադարեցնելուց 15 րոպե հետո, 47-րդ րոպեից: Միջադեպի պատճառով խաղադաշտից**

հեռացվեցին Միկա-06 թիմից N 6-ը, 1-ը և 7- ը, իսկ Արարատ-Արմենիա-06 թիմից N 6-ը, 8-ը և 25-ը:

---

*Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց* ՝

1) Հաստատված համարել «Միկա-06» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Միկա-06» թիմի ֆուտբոլիստ Արտյոմ Դաբաղյանին (27994) որակազրկել 3 խաղով և «ՍԱ Միկա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Միկա-06» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Միկա-06» թիմի ֆուտբոլիստ Արսեն Չաթոյանին (28312) որակազրկել 3 խաղով և «ՍԱ Միկա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:
3) Հաստատված համարել «Միկա-06» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Միկա-06» թիմի ֆուտբոլիստ Էդգար Մանուկյանին (27591) որակազրկել 3 խաղով և «ՍԱ Միկա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:
4) Հաստատված համարել «Միկա-06» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 16-րդ կետը՝ «ՍԱ Միկա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:
5) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-06» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա-06» թիմի ֆուտբոլիստ Միքայել Խուդավերդյանին (31214) որակազրկել 3 խաղով «Արարատ-Արմենիա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:
6) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-06» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա-06» թիմի ֆուտբոլիստ Արմեն Թորոսյանին (28105) որակազրկել 3 խաղով «Արարատ-Արմենիա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:
7) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-06» թիմի կողմից կարգապահական խախատում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա-06» թիմի ֆուտբոլիստ Մարտին Նիկոլյանին (28526) որակազրկել 3 խաղով «Արարատ-Արմենիա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

8) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա-06» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 16-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

<u>Հիշեցում՝</u>

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն
կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41-րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:
25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: